ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԲՐԻՖ

Նախագծի էությունը

Ակբա բանկը թողարկում է Mastercard World Elite պրեմիում դասի քարտը: Նպատակն է կազմակերպել բացառիկ և պրեմիում միջոցառում, որը կընդգծի բանկի դիրքավորումը պրեմիում սեգմենտում, կամրապնդի բրենդի հեղինակությունը՝ որպես բարձրակարգ և անհատականացված ֆինանսական լուծումներ առաջարկող բանկ, և կհաստատի ամուր ու վստահելի կապ հաճախորդների հետ: Ակնկալվում է ստեղծել հատուկ միջավայր, որն իր տեսակով կգերազանցի շուկայում առկա ստանդարտները՝ ապահովելով էստետիկ և յուրահատուկ փորձառություն: Միջոցառման հյուրերի քանակ՝ 100:

Հիմնական առավելությունները

Mastercard World Elite քարտը ներառում է բացառիկ ճամփորդական առավելություններ. Անսահմանափակ անվճար մուտք օդանավակայանների Lounge Key սրահներ, անսահմանափակ Fast Track ծառայությունից օգտվելու հնարավորություն, 24/7 կոնսյերժ ծառայություն և այլ ճամփորդական առավելություններ:
Միջացառման կոնցեպտը պետք է արտահայտի քարտի ճամփորդական առավելությունները հյուրերին տեղափոխելով մի աշխարհ, որտեղ հարմարավետությունն ու էքսկլյուզիվությունն անսահման են:

Թիրախային լսարան

Տարիք. 30-65 տարեկան:
Վարքագիծ. Հաճախակի միջազգային ճամփորդություններ, պրեմիում դասի ծառայությունների սպառում, բարձր տեխնոլոգիաների և անհատական մոտեցման համադրման պահանջ:
Ակնկալիք. Արտոնություններ, որոնք հասանելի չեն լայն զանգվածներին, և ճամփորդական փորձառության կատարյալ հարմարավետություն:
Միջոցառումը պետք է լիովին համապատասխանի այս լսարանի բարձր նշաձողին:

Վիզուալ կոնցեպտ

Բրենդինգ և էսթետիկա. Պահպանել բանկի կորպորատիվ գույների (ըստ բրենդբուքի) և բրենդի փիլոսոփայությունը, ինչպես նաև բանկի 30-ամյակի ու Mastercard-ի լոգոտիպերի ներդաշնակ կիրառումը՝ դրանք համադրելով Mastercard World Elite-ի պրեմիում էսթետիկայի հետ (սև, արծաթագույն երանգներ):
Ոճային ուղղվածություն. Միջոցառման ողջ ձևավորումը պետք է համապատասխանի պրեմիում սեգմենտի չափանիշներին՝ շեշտը դնելով մինիմալիզմի, որակյալ նյութերի և էլեգանտության վրա:

Հրավիրատոմս և նվերներ

Հրավիրատոմս. Հրավիրատոմսը պետք է դիտարկվի որպես միջոցառման առաջին և առանցքային վիզուալ տարրը: Փորձառությունը պետք է սկսվի հենց հրավիրատոմսի ստացման պահից (տեսքը, նյութը, մատուցման ձևը), որը կնախանշի միջոցառման բացառիկությունը:
Կոնցեպտուալ հիշողություն (Սիմվոլիկ նվեր). Առաջարկվող նվերը պետք է լինի վիզուալ և իմաստային առումով համահունչ ընդհանուր կոնցեպտին: Այն պետք է լինի ոչ թե սովորական հուշանվեր, այլ սիմվոլիկ արժեք, որը կամրապնդի Mastercard World Elite-ի տրամադրած «անսահմանափակության» և «ազատության» զգացողությունը նաև միջոցառումից հետո:
Խնդրում ենք, առաջարկի մեջ ներառել նաև հրավիրատոմսի և նվերի նախնական վիզուալիզացիան կամ մոքապը (mockup).

Հաղորդակցության ուղերձ

Mastercard World Elite՝ Ազատություն՝ ստեղծված Ձեզ համար

Միջոցառման համար առաջարկվող վայր

Միջոցառման անցկացման համար առաջարկում ենք Armenian Helicopters-ի տարածքը, քանի որ այն լիարժեք արտահայտում է Mastercard World Elite քարտի փիլիսոփայությունը:
Կոնցեպտուալ համապատասխանություն. Ավիացիան և ուղղաթիռները խորհրդանշում են բարձր կարգավիճակ, ազատություն և անսահմանափակ ճամփորդական հնարավորություններ, ինչը World Elite-ի առանցքային ուղերձն է:
Տարածքի ճկունություն. Ընդարձակ միջավայրը թույլ է տալիս իրականացնել մասշտաբային և ինովացիոն դիզայներական լուծումներ՝ համադրելով բանկի կորպորատիվ ոճն ու պրեմիում լուսային էֆեկտները:
Գործընկերային սիներգիա. Armenian Helicopters-ը հանդիսանում է բանկի գործընկերն ու հավատարիմ հաճախորդը, ինչը լրացուցիչ արժեք է հաղորդում միջոցառմանը՝ ընդգծելով Ակբա բանկի ամուր կապերը տեղական հեղինակավոր բիզնեսների հետ:

Իրականացման որակական չափանիշներ

Միջոցառման իրականացման հիմքում պետք է դրված լինի բացառիկ էսթետիկան և որակական կատարելությունը՝ ստեղծելով մեկ միասնական և ներդաշնակ միջավայր: Ակնկալվում է, որ յուրաքանչյուր մանրուք՝ սկսած լուսային լուծումների նրբերանգներից մինչև հյուրերի հետ հաղորդակցության յուրաքանչյուր դետալ, պետք է համապատասխանի ընտրված կոնցեպտին: Անհրաժեշտ է ապահովել գաղափարական և տեսողական ամբողջականություն, որտեղ յուրաքանչյուր տարր ծառայում է բրենդի պրեմիում դիրքավորմանը և համապատասխանում է շուկայի ամենաբարձր չափանիշներին:

Միջոցառման վայրի նկարներ

Mastercard World Elite քարտի դիզայն